ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 845 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 764-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Ջինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 00904586) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 7-ի «Ջինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնի հիմնանորոգում, վերազինում և կահավորում» ծրագրի մասին» N764-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՐՄՓԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00912335) 2022 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ N 31102022 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական սարքավորումների ձեռքբերում և դրանց տեղակայման, մոնտաժման ու կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 20,448,667 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Իքս-Արթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01237555) 2022 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված՝ N 28/10/22-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անխափան սնուցման աղբյուրների (UPS), սերվերային պահարանների և սերվերային պահարանի դարակների ձեռքբերում՝ 7,071,579.71 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

30.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ